Հաշվետվություն

ՀՀ Էկոնոմիկայի նախարարության Զբոսաշրջության կոմիտեի Մարքեթինգի և խթանման վարչության խորհրդական Անի Արևշատյանի Արաբական Միացյալ Էմիրություններ (քաղաք Դուբայ) գործուղման արդյունքների վերաբերյալ

1. **Անուն, ազգանունը՝**

Անի Արևշատյան

2. **Զբաղեցրած պաշտոնը՝**

Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության Զբոսաշրջության կոմիտեի մարքեթինգի և խթանման վարչության խորհրդական

3. **Գործուղման վայրը և ժամկետները՝**

Արաբական Միացյալ Էմիրություններ (քաղաք Դուբայ),

2021 թվականի մայիսի 15-ից մայիսի 19-ը ներառյալ

4. **Հրավիրող կողմը՝**

ATM Dubai 2021 միջազգային զբոսաշրջային ցուցահանդեսի կազմակերպչական թիմ:

5. **Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)**

ATM Dubai 2021 միջազգային զբոսաշրջային ցուցահանդես՝ այցի հիմնական նպատակներից էր ներկայացնել Հայաստանի զբոսաշրջային ներուժը միջազգային թիրախային հարթակներում, տեղում ապահովել ոլորտը ներկայացնող պետական միասնական տաղավարի պատշաճ ներկայացվածությունը, համակարգել ոլորտի ներկայացուցիչների անխոչընդոտ աշխատանքը ցուցահանդեսի որջ ընթացքում, կազմակերպել և մասնակցել մի շարք երկրների զբոսաշրջային ոլորտի պետական

հատվածի ներկայացուցիչների հետ հանդիպումների՝ հետագա հնարավոր համագործակցության եզրեր գտնելու նպատակով:

6. Քննարկված թեմաները

Քննարկումներ են տեղի ունեցել մի շարք երկրների ներկայացուցիչների հետ: Քննարկման հիմնական թեմաները առընչվում էին համագործակցային ճանապարհով զբոսաշրջության զարգացմանն ու Հայաստանի ճանաչելիության բարձրացմանը:

7. Հանդիպումներ, ելույթներ, բարձրացված կամ քննարկված հարցերը

Միջազգային զբոսաշրջային ցուցահանդեսի ընթացքում տեղի են ունեցել մի շարք հանդիպումներ, մասնավորապես՝ Քուրդիստանի Զբոսաշրջության գլխավոր խորհրդի նախագահ Ամալ Ջալալ Մուհամադի հետ, ԱՄԷ-ում ՀՀ արտակարգ և լիազոր դեսպան Միեր Մկրտումյանի և Գլխավոր հյուպատոս Սեյրան Կարապետյանի հետ, ինչպես նաև Իսրայելի, Բելոռուսի և Եգիպտոսի պետական զբոսաշրջային ոլորտը ներկայացնող պաշտոնյաների հետ: Հանդիպումների արդյունքում քննարկվեցին զբոսաշրջության ոլորտում ներկայիս իրավիճակի պայմաններում առկա խնդիրներն ու դրանց լուծման մեխանիզմները, համատեղ փոխհամագործակցության միջոցով զբոսաշրջության զարգացումն ու բարելավումն ապահովելու նպատակով: Ինչպես նաև ձեռք բերվեցին պայմանավորվածություններ ցուցահանդեսին ներկայացված և Հայաստանի համար թիրախային շուկա համարվող երկրներից այցելություններ ապահովելու նպատակով մշակելու համատեղ մարքեթինգային գործուղություններ:

Տեղի են ունեցել հանդիպումներ նաև հայտնի լրատվամիջոցների ներկայացուցիչների և բլոգերների հետ, քննարկվել են վերջիններիս մասնակցությամբ դեպի Հայաստան ճանաչողական այցերի կազմակերպման միջոցով Հայաստանի, որպես զբոսաշրջային ուղղության ճանաչելիության բարձրացման ձևաչափերը:

8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.

Հանդիպումների արդյունքում ձեռք են բերվել պայմանվորվածություններ 2021 թվականի ընթացքում սերտ համագործակցությամբ մշակել նոր ձևաչափեր ԱՄԷ-ից դեպի Հայաստան զբոսաշրջային հոսքերի ավելացմանը նպաստելու նպատակով: Մի շարք հայտնի լրատվամիջոցների հետ հանդիպումների ընթացքում ձեռք են բերվել պայմանավորվածություններ կազմակերպելու հայտնի լրատվական ընկերությունների և մի

քանի 100 հազարից ավել հետևորդ ունեցող բլոգերների այցեր դեպի Հայաստան: ԱՄԷ-ում ՀՀ արտակարգ և լիազոր դեսպան Միեր Մկրտումյանն առաջարկեց իր աջակցությունը կազմակերպելու ԱՄԷ-ի և ՀՀ-ի խոշոր զբոսաշրջային կազմակերպությունների միջև B2B հանդիպում Հայաստանում:

Այցի շրջանակներում փաստաթղթեր չեն ստորագրվել:

9. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

Ներկայումս քննարկվում են հանդիպումների ընթացքում բարձրաձայնված առաջարկների առավել արդյունավետ իրականացումը, մասնավորապես թիրախային երկրների հետ երկկողմ և բազմակողմ համագործակցության ակտիվացման նպատակով ճանաչողական փոխայցեր կազմակերպելու հնարավորությունները:

10. Ստորագրությունը, ամսաթիվը՝

24.05. 2021